

վայր նշված է Մարսելը, մի մասի վրա էլ Զմյուռնիայի անունն է՝ Երևանի Մեսրոպ Մաշտոցի անվան պետական մատենադարանում պահվում է այդ տպագրությունից երկու օրինակ, որոնցից մեկի տիտղոսաթերթի վրա նշված է տպագրության իսկական վայրը՝ Մարսելը (Չնատիպ գրքերի բաժին N 1164), իսկ մյուսի վրա իբրև տպագրության վայր ցույց է տրված Զմյուռնիան (Չնատգրքերի բաժին N 2423):

Հայտնի են նաև այլ օրինակներ, սակայն, դրանք հազվադեպ են: Գրքերը մի քաղաքում տպագրելու, բայց այլ քաղաք ցույց տալու կեղծիքը լայն շափով կիրառել են Կ. Պոլսի Բեկօղլի թաղամասի տպարանի հիմնադիր կաթուղիկ հայերը:

Տեսնենք, թե ե՛րբ է հիմնադրվել այդ տպարանը:

Որևէ դրավոր հիշատակություն չկա, թե ումի՛ց կամ ի՛նչ ճանապարհով են հայ կաթուղիկները ձեռք բերել իրենց տպարանը: Զի հիշատակվում նաև տպարանի հիմնադրման ստույգ թվականը: Այս հարցերից առաջինի մասին լավաբար տեղեկություններ ենք ստանում «Թ թաղն Պէկօղլի» նշումով գրքերի և Ոսկան Երևանցու տպարանի գրքերի համեմատությունից: Այդ երկու տպարանների հրատարակություններն ունեն մի շարք ախպիսի ընդհանրություններ, որոնք վկայում են Ոսկանի տպարանը կաթուղիկներին անցնելու մասին: Այդ ընդհանրություններից կարևորներն հետևյալներն են.

- ա) Ոսկան Երևանցու Աստվածաշունչ, Շարական և այլ հրատարակություններում հանդիպող հուանդացի փորագրել C.V.S-ի (Կոռնելիուս վան Սիզեմ) ստորագրությամբ պատկերները օգտագործված են նաև Կ. Պոլսում կաթուղիկների տպագրած գրքերում: Միևնույն են նաև գլխադարձերը, վերջագրողները, լուսանցազարդերն ու դարձագրերը:
- բ) Կաթուղիկների բոլոր հրատարակությունները շարված են ոսկանյան մանր ու միջին չափի տառերով:

Պատահական չէ, որ կաթուղիկներն իրենց գրքերի տիտղոսաթերթերում դնում են այն քաղաքների անունները, ուր գրքեր են տպագրել Ոսկան Երևանցին և նրա ժառանգները (Ամստերդամ, Լիվոռնո, Մարսել): Մի շարք գրքերի վրա նրանք նշել են Ոսկանի տպարանի անունը՝ «Ս. էջմիածնի և ս. Սարգսի զորավարի»: Նկատելի է նաև, որ իրենց տպագրած գրքերում հաճախակի են հիշատակում Ոսկանի անունը:

Թե ի՛նչ ճանապարհով և ո՛ր թվականին է Ոսկանի տպարանը կաթուղիկների ձեռք անցել, դեռևս պարզված չէ: Սակայն, Ոսկանի մահից հետո նրա տպարանի գործունեությունը, այնտեղ լույս տեսած գրքերի տիտղոսաթերթերում և հիշատակարաններում բերված անունները, տպագրության հանգամանքների մասին եղած տեղեկությունները որոշակի շատ բան են ասում այդ տպարանի հետագա ճակատագրի մասին: Հայտնի է, որ Ոսկանի մահից հետո նրա տպարանը անցնում է իր քեռորդի Սողոմոն Լեոնյանին: Վերջինս Մատթեոս Վանանդեցու և Նասիր Գրիգորյանի հետ 1674—1683 թթ. տպագրում է մի շարք գրքեր: Այնուհետև Ոսկանի տպարանից դուրս եկած ուրիշ հրատարակություններ էլ կան, որոնց մեջ մեծ մասամբ միայն Մատթեոս Վանանդեցու անունն է հիշատակվում, բայց ոչ թե իբրև տպարանատեր, այլ շարաբարդողի (գրաշար) և կամ սրբագրողի: Օրինակ, 1683-ին տպագրությունն սկսված և 1684-ին ավարտված «Պարտեզ հոգևորի» հիշատակարանում ասվում է. «Հաւանութեամբ տեսան Ոսկանի Արքեպիսկոպոսի Երևանեցույ հանգուցելոյ առ Քրիստոս: Շարաբարդութեամբ և սրբագրութեամբ Մատթեոսի Վանանդեցոյ»: Հայտնի է նաև, որ 1669 թ. Ոսկանի կողմից սկսված՝ «Շարակնոցի» տպագրությունն ավարտում է Պետրոս Զուղայեցին 1680-ական թվականներին, առանց Լեոնյանի մասնակցության: Այս շրջանում տպագրված գրքերում Սողոմոն Լեոնյանի անվան բացակայությունը ցույց է տալիս, որ նա հեռացել էր ասպարեզից: Հիմնվելով Մատթեոս Վանանդեցու 1685 թ. սեփական տպարանում տպագրած «Շարականի» հիշատակարանում արված մի ակնարկի վրա, ենթադրում ենք, որ 1684 թ. Սողոմոն Լեոնյանը վախճանված պետք է լիներ: Այդ հիշատակարանում Մատթեոսը գրում է. «Ես նուաասո լամենից Մատթեոս դպիրս՝ եկի ծառայելու արևնակից վարդապետին իմոյ յերկիրն յիտալացոց ս ի մայրաքաղաքն Հռոմ, և վեհն իմ

8 Այս մասին տե՛ս «Ընդարձակ տարեցույց Ս. Փրկչեան ազգային հիւանդանոցի», Կ. Պոլիս, 1930, էջ 294—295: Ի դեպ, այս և հայ տպագրության հին շրջանի վերաբերյալ բազմաթիվ այլ սխալներ շարունակում են կրկնվել մեզանում: 1946 թ. տպագրված Գ. Լեոնյանի «Հայ գիրքը և տպագրության արվեստը» աշխատության մեջ (էջ 146, 246) և նրանից հետո գրված ուսումնասիրություններում, Զմյուռնիայի հայկական տպարանի հիմնադրումը 1759-ից կա է տարվում, հասցվում է 1676 թվականը: